ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №: 1

26.02.2021 Թ. ԿՆՔՎԱԾ N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/3-1 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «12» «Մարտ» 2021 թ.

«Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, «ՀԱՌ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Հովակիմյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 26.02.2021 թ կնքված ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/3-1 պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել Պայմանագրով աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը համաձայն N: 1 Հավելվածի:

1.2 Հաստատել Պայմանագրով նախատեսված աշխատանքների դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն N: 2 Հավելվածի:

1.3 Պայմանագրի 2.4 կետը հաստատել հետևյալ խմբագրմամբ.

« 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 2021 թ. ոռոգման սեզոնի ավարտը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

2.4.3 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.4 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:»

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի N: 1 և N: 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 3 (երեք) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ	«ՀԱՌ» ՍՊԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8	ՀՀ, Արագածոտնի մարզ ք. Բյուրական, 28 փող, 11 բն.
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/6	«ԱԳԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621	h/h 22004333149900 0, ՀՎՀՀ 05023111
Տնօրեն	Տնօրեն
---------- Ա. ԱԲԳԱՐՅԱՆ	---------- Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 1
26 փետրվարի 2021 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/3-1 պայմանագրի
№ 1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՋՐԱՅԻՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԺԱՆԴԱԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կատարողի կողմից կատարվող աշխատանքների առանձին փուլերի անվանումներ	Մատուցման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Ռանչպարի 1-ին աստիճանի պ/կ ճնշումային խողովակաշարերի 40 հատ D= 1820 մմ կոմպենսատորների ընթացիկ նորոգում	10.03.2021 թ.	18.03.2021 թ.
2	Ռանչպարի 1-ին պ/կ ճնշումային խողովակաշարերի 2 հատ D= 2020 մմ և Ռանչպարի 2-րդ պ/կ ճնշումային խողովակաշարերի 14 հատ D= 1420 մմ կոմպենսատորների ընթացիկ նորոգում	19.03.2021 թ.	26.03.2021 թ.
3	Մխչյանի 1-ին պ/կ ճնշումային խողովակաշարերի 16 հատ D= 1820 մմ կոմպենսատորների հիմնական նորոգում	27.03.2021 թ.	05.04.2021 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

---------- Ա. ԱԲԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՀԱՌ» ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ ք. Բյուրական, 28 փող, 11 բն.
«ԱԳԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 220043331499000, ՀՎՀՀ 05023111
Տնօրեն

---------- Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

Հավելված № 2
26 փետրվարի 2021 թ. կնքված
N: ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/3-1 պայմանագրի
№ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231124/501	Մխչյանի 1-ին աստիճանի պ/կ ճնշումային խողովակաշարերի կոմպենսատորների հիմնական նորոգում				1000000	1000000	1000000	1000000	1000000	1000000	1200000	1200000	1200000	1200000
4	45231124/504	Ռանչպարի 1-ին և 2-րդ աստիճանի պ/կ ճնշումային խողովակաշարերի կոմպենսատորների ընթացիկ նորոգում			2000000	4000000	5500000	5500000	5500000	5500000	5500000	6000000	6000000	6000000	6000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ՏԿԵՆ ՋԿ «Ջրառ» ՓԲԸ
Երևան, Վարդանանց փակուղի 8
Արդշինբանկ» ՓԲԸ, Նալբանդյան մ/ճ
h/h 2479000059160000, ՀՎՀՀ 00093621
Տնօրեն

_____ Ա. ԱԲԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՀԱՌ» ՍՊԸ
ՀՀ, Արագածոտնի մարզ ք. Բյուրական, 28 փող, 11 բն.
«ԱԳԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
h/h 220043331499000, ՀՎՀՀ 05023111
Տնօրեն

_____ Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*